Այլևայլ տեղերէ կու գան գաւառիս շերամի բոժոժք կամ խոզակք, և հունտերը յիտալիոյ, ի Ճապոնէ, ի Գաղղիոյ և ի Խորասանէ: Ինչուան հիմայ նախամեծար սեպուած են Գաղղիոյ և Ճապոնի արտադրութիւնք: Բաբայեվ գեղացւոց շատին հունտ բաշխողն է, պայմանաւ որ յետոյ իրեն պիտի վաճառուին խոզակք. առատ է այս տարի, և մեր ասպնջականին շտեմարանք լեցուն:

Շարայարելի

ԿԱՆՈՆ

ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ

Շարականիս հեղինակի անունն անծանօթ է մեզ՝ մեր ունեցած Ա. Բ և Գ գրչագիրներէն. զի առանց հեղինակի անուան գրուած էր խորագիրն ըստ վերօգրելոյն. սակայն որովհետև մեր Կիլիկեցւոց Բ Հեթում արքային համար գրուած ընտիր շարականին մէջ զկնի խորագրին յաւելուած էր « ի Գրիգորէ կաթուղիկոսէ », յայտ է թէ Գրիգոր Է Անաւարզեցի կաթողիկոսն է. (տես Բազմ. հտ, ԾԲ, էջ 9–10). որ շատ պակասներ մեր շարականաց հնոց ոճոյն և ձևին համեմատ գրել և լրացընել ջանացած է: Սոյն շարականս հանած եմք նոյն գրչագրէն, որ գաղափարուած է ԺԴ դարու սկիզբները գրուած արքունական օրինակէ մի. Հեթմեան Շարականին մէջ կը պակսի ամբողջն բաց ի առաջին երկու տուներէն և խորագրէն.

ԴԿ. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ԱՆՃԱՌ խորոց քո գիտութեամբ, Հայր, հեմնարկեր իմաստութեամբ, աստուածային քոյ տաճար կոյս մօր որդւոյ քո և ծնողի. զնահապետաց սուրբ ընտրութիւն և զնախահարցն արդարութիւն, զոր շինեցեր գուշակութեամբ մարգարէից բանիւն լրմամբ:

Բանդ՝ միակս ի հունձ հաներ զմարգարէից վաստակս հնձել, սուրբ զԱռաքեալս երկոտասան, խորհրդական թիւ սրբազան, և զաշակերտս եօթանասուն, հետևողքն ի քո անուն, նախ քան զաշխարհս զնոսա ընտրեալ՝ ոլք զաւետիս կենաց հնչեալ:

Գոհաբանեալդ Սուրբ Հոգի, նոր դրախտ ցուցեր զեկեղեցի, սուրբ հոգևոր տնկօք լցեալ՝ կենաց փայտին շրջապատեալ, հայրապետաց սրբոց գնդի՝ պայծառ բանիւն պտղալի և վըկայից խառն երամի փթթեալ արեամբն ծաղկալի:

Դաւանեալդ Երրորդութիւն, պաշտեալդ յէից աստուածութիւն, քև ճըգնաւորքն խրախուսեալ միայն ընդ քեզ առանձնացեալ, պարկեշտ մաքուր հոյլքըն կուսից՝ քո հարսնացեալ ճառագայթից, որոց հայցմամբն համայնից մեզ յամենայն մաքրեա ախտից:

Երկուց խառնօղ որմոց ի մի՝ յերկրէ մարմնով տիրօղ երկնի, մի գործեցեր զեկեղեցի՝ զերկնաւորաց զօրս և երկրի, այսօր բոլոր դասք հրեշտակաց խառնուրդ սրբոց երկրաւորաց, զամենեցուն մի Տէրդ օրհնեն և ընդ մարդկան բարեխօսեն:

Զքեզ ամենայն սուրբք երանեն; Գաբրիէլիւ հրեշտակօք գովեն, Մայր հաստողի բանին զերկին, զոր ծնար փրկիչ երկրի մարմին, հաղորդ սուր

digitised by A.R.A.R.@

րինս եկեղեցի, եկեղեցւոյդ մեծ որ յերկնի, գլխաւորանդ ի մի օրհնեմք, բարեխօսել միշտ աղերսեմք։

Էակցին Հօր սպասաւորք՝ հուպ անհասին և մերձաւորք, առաքելոց գունդք երանեալ և աշակերտք բանին ընտրեալ, ձերօք ծննդօք զոր երկնայինք պտղօք բարեաց զոր տնկեցիք. այսօր բոլոր սրբօք մաղթել մատիք առ Տէր բարեխօսել։

Ընդունօղք Ոգւոյն շնորհի, Մարգարէից պար գովելի, սուրբ Նախահարք՝ նախկին ընտրեալք, և Նահապետք արդարացեալք, ձեօք օրհնութիւն աղբիւրացաւ, ուխտի բնութիւնս արժանացաւ. այսօր բոլոր սրբօք մաղթել մատիք առ Տէր բարեխօսեալ։

Թարգմանութեամբ խոր իմաստից, լոյս ծագեցէք մարդկան տոհմից, վարդապետաց կարգ երրակի, սուրբ Հայրապետք և սքանչելի, վասն Բանին վըկայք զենեալ և Մարտիրոսք որք խաչեցեալ. այսօր բոլոր սրբօք մաղթել, մատիք առ Տէր բար։

Ժուժկալութեամբ զմարմին սպանեալ, յայր և ի ծերպս երկրի ճըգնեալ, սուրբ Ճգնաւորք հարք՝ ի շնորհէ հրեշտակացեալք ի մարդկանէ կոյսք իմաստունք, որք վեհ արուաց ի կանացի բնութիւն իգաց. այսօր բոլոր սըր։

Ի կենարար փայտէն ծաղկեալ, խաչին պտուղ բազմապանեալ, գունդք ամենայն մարտիրոսաց՝ ծնօղք ընդ որդւոց և դստերաց՝ աղաւնացեալք երամովին և ձագախառն ելեալ յերկին. այսօր բոլոր սըր։

Լուսոյն ծագօղ անճառապէս, արդարութիւն մեր մաքրապէս, կեանք անուանեալ աղբիւր կենաց, մայր ամենայն այս կենդանեաց. լուծիչ մահուն պարտեաց նախկին, կոյս Մարիամ Աստուածածին. այսօր բոլոր սրբովք մաղթել, մատիր առ Տէր բարեխօսել։

Գկ. խորհրդական խորան քաւութեան, զմայր միածնիդ յայտնեցեր մարդկան, որպէս տաճարին զսուրբն սրբոց՝ ցուցեր զնա սուրբ ամենայն սրբոց, նորին աղաչանօք խնայեա ի մեզ։

Ծնունդ և բան Հօր միածին, զքեզ առաքեալքն քարոզեցին, որք աղ երկրի և լոյս աշխարհի. և աթոռակից փառաց գալստեանդ ի դատաստանի. նոցին աղաչանօք խնայեա։

Կենդանարար Ոգի Աստուծոյ՝ ի նախահարս հնչեցեր զկենդանական շարժումն ոգւոյ. որով պարտիլ մահուան ի Մովսէս և թագաւորել կենաց գուշակեաց ի սուրբ մարգարէսն. նոցին։

Հաղորդակից դաւանութեամբ՝ հարքըն բանիւ և վկայից հանդէսն, մահուամբ քարոզեցին զքեզ Երրորդութիւն, երիս անձինս, մի բնութեամբ անզատ միութիւն. նոցին աղաչ։

Ձայնիւ խաչեալ հովուիդ հետևեալ, ազ չարչարանաց մարմնոյ փութացեալ, ճգնաւորաց հոյլքն հեզութեամբ, և սուրբ կուսանաց խումբն զգաստութեամբ, նոցին աղաչանօք.

Ղեկավարեալ ոգւոյն զօրութեան, տապան աշխարհի կրկին նորոգման, զօծելոյն մարմնոյ տերև ձեթենոյ բերօղ ի ոգւոյն նշան փրկութեան. մաղթեա ընդ մեր Աստուածածին՝ առ քոյդ միածին։

ՀԱՐՑ ԴՁ.

Ճշմարտապէս զուխտ քո այսօր Աբրահամու Աստուած լցեր, աստեղս երկնի պայծառութեամբ իբրև զաւազ անչափութեամբ, զհաւատոյ որդիացեալսն բազմացուցեալ. օրհնեալ Տէր Աստուած հարցն մերոց։

Միածին Բան, յաշխարհի ծով մեկնեցեր զբանիդ ուռկան, ի բազմապատիկ տան Հօր յօթևանս՝ զբարիսն իբր ի բարի յաման՝ զառ յամենայն ազգաց ընտրեալսն ժողովեցեր. օրհ։

digitised by A.R.A.R.@

Յառատ շնորհէ քո Սուրբ Ոգիդ, և զհին զանձս հաներ՝ զեկեղեցւոյ տուն քո լցուցեալ, Նախնի և Նոր սրբովք ընտրեալ, որք հին և Նոր կտակարանաց սերմամբ քո բուսեալ. օրհնեալ Տէր։

ԶՏէր օրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։

Նոր հեթանոսաց փրկեալ ընդ հին Սիոնի, բոլոր սրբոց մի(յ)եկեղեցի. զՏէր օրհ։

Շնորհիւ դասակցեալ ոգիք հրեշտակաց գնդին, ժողովք սրբոց անդրանկաց յերկին. զՏէր օրհ։

Որոց հաղորդեալ և մեք մասն ընդ բոլորին, ի միաբար տօնս աստուածային երգեմք ի մի խառնօղ բանին, զՏէր օրհ.

ՈՂՈՐՄԵԱ ԴԿ.

Զարչարանօք ընտրեալքն քո մաքրեալք՝ որպէս ի բով ոսկւոյ բազում անդամքն մի մարմնոյ յօդեալք ի փառս միոյդ գլխոյ. բարեխօսութեամբ սոցա ողորմեա մեզ որդի Աստուծոյ։

Պարագլխոց պար բոլորեալ, Որդւովդ ի Հայր քև միացեալ, այսօր ընդ մի փառաւորեալ են ամենայն սուրբք տօնեցեալ. բարեխօսութեամբ։

Ջերմն սիրոյ քո հուր արկեալ՝ ըզզանազանս ի մի ձուլեալ՝ որք իբրև զամպ զմեօք մածեալ, բազմապատիկ վկայք խառնեալ. բարեխօսութեամբ.

Ոխամից հանուրց են հրաշալի, որք ձրի առեալ և ետուն ձրի, սուրբ անարծաթքն պքանչելի Դամիանոս ընդ Կոզմայի. բարեխօսութեամբ։

ՏԷՐ ԵՐԿՆԻՑ

Սուրբդ ի սրբոց վկայեալ՝ Երրորդութիւն քարոզեալ, այսօր գործոց քո լրմամբ, հանդչիս տեսօղ ցնծութեամբ. որով և մեք տօնակից՝ օրհնեմք հանուրցն ձայնակից։

Վերին Սիոն խմբաւոր, ի թագաւորդ երկնաւոր, այսօր դշխոյ ոգւոր, հրճուի որդւովք պսակաւոր, զորս իսրայէլ Նոր յերկրէ՝ ընդ արարիչդ այժմ երանէ։

Տիրեալ յերկնից քո խորան, աղքատք ոգւով թագեցան, մխիթարեալք և ցնծան՝ սուրբքն որ ի սուգ աստ մաշեցան. ընդ Նոսին սուրբս ամենայն օրհնեմք և մեք համաձայն։

Րամեալ զկենդանեացդ երկիր՝ հեզք ժառանգեն անպատիր, ճնշեալ քաղցիւ զմարմին, կենաց պտղովդ յագին. ընդ Նոսին։

Ցրուեալք զգոյս յողորմիլ՝ ողորմութեանդ հաղորդիլ՝ սուրբքն սրտիւք զքեզ տեսեալ, խաղաղարարքն որդեգրեալ. ընդ Նոսին։

Իւծեալք զկեանս հալածմամբ՝ և հանգչին արքայութեամբ, զուր վասն քո Նախատեալ, անճառ բազում վարձ ընկալեալ, յօդեալ բոլորդ զմասունս՝ երգեմք և մեք զփառս ի բարձունս։

ՄԱՆԿՈՒՆՔ ԱԿ.

Փարատելով զհիւանդութիւնս՝ կըրկին երեւեցար Բանդ ի մարմնի, որ զքեզ հիւանդաց բժիշկ կոչեցեր՝ որով շնորհիւ սուրբ զանարծաթսն այսօր փայլեցեր, մաղթանօք սոցա զանձինս մեր բժշկեա։

Քեզ ճշմարիտ վարդապետի, հաղորդք անուան գործոց և բանի, մարդասէր գթով անինչք շրջեալք յաշխարհի՝ բժիշկն ձրի Դամիանոս ընդ Կոզմայի. մաղթանօք։

Հաղորդ սոքօք և մեք օրհնեմք՝ թագեցելոյն ընդ քեզ շնորհօք վայելեմք, որ զխոստովանողսն քո զԿոզմաս և զԴամիանոս ուսեալ կրկին բժշկութեան աղբիւր եդեր ի յերկրի. մաղթանօք սոցա։

digitised by A.R.A.R.@